Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2020 թ. որոշմամբ
«ԻՆՈՎԱՑԻՈՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԻՆՈՎԱՑԻՈՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՋԱՓՆՅԱԿ ԱՋԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ 30 23
1.3 Պետական գրանցման համարը		222.160.1011838
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2018-03-28
1.5 ՀՎՀՀ-ն		01281219
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93991175
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		istc.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@istc.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Արեգ Գևորգյան Գնունու		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Ժենյա Ազիզյան		
Արամ Սալաթյան		
Արմեն Մելքոնյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	8	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Տեխնոլոգիա SGD ֆինանսավորման հարթակի համարը և նորարար լուծումների ՀՀ-ում վերջինիս ներդրման համար աքսելերացիոն #5 ծրագիր	14950267
	SS դասընթացներ	1132500

Digitally signed by KHLGHATYAN SIRANUSH 7709770118
Date: 2020.06.30 19:14:31 AMST

	Միջոցառման կազմակերպում	32039114
	Համակարգչային ցանցի տեխնիկական սպասարկում	540000
	Խորհրդատվություն, մենթորություն, մարզչական ծառայություն	13485750
	Հոսթինգի հասանելիություն	149500
	Տվյալագիտության ծառայություն	6771500
	Քլաուդ քոմփյութինգ	1364760
	Դիզայնի ծառայություններ	200000
	Միջոցառման տեխնիկական աջակցում	933810
	Կայքի տեխնիկական լրամշակման ծառայություններ	500000
	Հոսթինգի հասանելիություն	234425
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	SS դասընթացներ	15929750
	Դոմեյնի գրանցում	1531000
	Դոմեյնի գրանցում	227250
	Հոսթինգի հասանելիություն	29100
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Տեխնոլոգիա SGD ֆիանսավորման հարթակի համարը և նորարար լուծումների ՀՀ-ում վերջինիս ներդրման համար աքսելերացիոն #5 ծրագիր	5771095	
Մարկետինգի և գովազդի ծախսեր	253510	
Աշխատանքի վճարման ծախսեր,սոցիալ.ապահովագր.վճարներ	35471080	
Լիցենզիաների գծով ծախսեր	1135063	
Ներկայացուցչական ծախսեր	513102	
Գործուղման և այլ վարչական ծախսեր	2089313	
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2178988	
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	14800000	
Բանկային ծառայություն.ծախսեր,ապահովության ծախսեր	90972	

Միջոցառման կազմակերպում	3259644
Վերանորոգման և պահպանման ծախսեր	1242937
Քլաուդ քոմփյութինգ	759813
Դասընթացներ	21083451
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	88648968
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	88648968

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___19___թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Ինովացիոն Լուծումների և Տեխնոլոգիաների Կենտրոն» հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Հոգաբարձուների խորհրդի կազմ
7	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
8	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
9	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հիմնադրամի գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Հիմնադրամի գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Գործադիր տնօրեն՝	Արեգ Գևորգյան

Հեռ.՝+37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ինովացիոն Լուծումների և Տեխնոլոգիաների Կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ինովացիոն Լուծումների և Տեխնոլոգիաների Կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը՝ 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը համաձայն՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք),* և պահպանել ենք ՀՄԷՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Հանգամանքի շեշտադրում – հետագա դեպքեր

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 15-ի վրա, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած համավարակի (COVID-19) հնարավոր ազդեցությունը:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

BDO

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վսհագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

30 հունիսի, 2020թ.
ք.Երևան

BDO

Հոգաբարձուների խորհրդի կազմ

Ժենյա Ազիզյան
Խորհրդի նախագահ (Հայաստան)

Արամ Սալաթյան
Խորհրդի անդամ (Հայաստան)

Արմեն Մելքոնյան
Խորհրդի անդամ (Հայաստան)

	Ծան.	2019թ. Հազար դրամ	2018թ. Հազար դրամ
Հասույթ	4	75,068	38,024
Վաճառքի ինքնարժեք	5	(39,303)	(11,374)
		35,765	26,650
Շնորհից եկամուտ	6	5,771	-
Վարչական ծախսեր	7	(47,899)	(7,747)
Ծրագրային ծախսեր	8	(5,771)	-
Իրացման ծախսեր		(254)	(245)
Այլ ծախսեր		(117)	(18)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/ (կորուստ), զուտ		2	(38)
Արդյունք մինչև հարկումը		(12,503)	18,602
Շահութահարկի գծով (ծախս) / փոխհատուցում	11	2,173	(3,728)
Տարվա զուտ արդյունք		(10,330)	14,874
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		(10,330)	14,874

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արեգ Գնդեղյան
Գործադիր տնօրեն

Միրանուշ Խլղաթյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	31.12.2019թ. հազար դրամ	31.12.2018թ. հազար դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		844	-
		844	**-**
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ	9	11,916	8,533
Դեբիտորական պարտքեր, կանխավճարներ	10	4,038	8,950
Հետաձգված հարկային ակտիվ	11	2,173	-
Ընդամենը ակտիվներ		**18,127**	**17,483**
		18,971	**17,483**
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	12	9,179	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	5,248	975
Շահութահարկի գծով պարտավորություն	13	-	1,634
Ընդամենը պարտավորություններ		**14,427**	**2,609**
Զուտ ակտիվ			
Կուտակված արդյունք		**4,544**	**14,874**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արեգ Գնորգյան
Գործադիր տնօրեն

Միրանուշ Խլղաթյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2019թ. Հազար դրամ	2018թ. Հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից մուտքեր	82,980	30,070
Մուտքեր դրամաշնորհներից	14,950	-
Վճարումներ ծառայությունների դիմաց	(43,442)	(9,765)
Վճարումներ աշխատակիցներին	(26,586)	(5,061)
Վճարումներ հարկերի գծով	(22,449)	(4,856)
Վճարումներ գնումների դիմաց	-	(738)
Այլ ելքեր	(1,215)	(1,117)
Գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	**4,238**	**8,533**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց վճարումներ	(855)	-
Ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	**(855)**	**-**
Դրամական միջոցների զուտ հոսք	3,383	8,533
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	8,533	-
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**11,916**	**8,533**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2020թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Արեգ Գնորգյան
Տնօրեն

Միրանուշ Խլղաթյան
Գլխավոր հաշվապահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ 11
2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 11
3 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ - ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 13
4 ՀԱՍՈՒՅԹ 15
5 ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ 15
6 ՇՆՈՐՀԻՑ ԵԿԱՄՈՒՏ 15
7 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ 16
8. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ 16
9. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 16
10. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ, ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ 16
11. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ 17
12. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ 18
13. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ 18
14. ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 18
15. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 18
16. ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍԱԹՎԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՊՔԵՐ 18
17. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 19

1 Հիմնադրամի մասին

«Ինովացիոն Լուծումների և Տեխնոլոգիաների Կենտրոն» հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2018թ.-ին: Հիմնադրամի կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2018թ. մարտի 28-ին, գրանցման համարը՝ 222.160.1011838:

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արզումանյան 30/23: Հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 01281219:

Հիմնադրամի գործունեության նպատակն է՝

ա) Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի բարելավման և զարգացմանն ուղված ծրագրերի իրականացում,

բ) Գիտական, հետազոտական, տեխնոլոգիական ծրագրերի աջակցում և իրականացում,

գ) Ստարտափ թիմերի աջակցում,

դ) Ինովացիոն, տեխնոլոգիական պրոդուկտների, մշակումների ստեղծում,

ե) Ներդրումների խթանում և արտասահմանյան տեխնոլոգիական գործընկերների այդ թվում ԲՈՒՀ-երի հետ համագործակցության ձևավորում:

2 Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ-ներ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 17-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Հիմնադրամի գործառնական արժույթը:
Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Անընդհատության սկզբունք
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2019թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

- ՖՀՄՍ 16 "Վարձակալություն";
- ՖՀՄՄԿ 23 "Շահութահարկի հաշվառման մոտեցման անորոշություն":

Նշվածներից ոչ մեկը չունի նշանակալի ազդեցություն Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Առկա չեն նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Հիմնադրամի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:
Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի ասիճանակարգ»):
· *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
· *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
· *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*
Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

3 Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Հիմնադրամը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:
Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Հիմնադրամի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Հիմնադրամի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ,
- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	
Ֆինանսական ակտիվներ	2019թ. Հազար դրամ	2018թ. Հազար դրամ
Դրամական միջոցներ	11,916	8,533
Դեբիտորական պարտքեր	765	8,899
	12,681	17,432

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	
Ֆինանսական պարտավորություններ	2019թ. Հազար դրամ	2018թ. Հազար դրամ
Կրեդիտորական պարտքեր	267	975
	267	975

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:
Դրամական միջոցների, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Հիմնադրամի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է հոգաբարձուների խորհրդի կողմից:
Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Հիմնադրամի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

Դրամական միջոցներ բանկում

Հիմնադրամը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի որ Հիմնադրամի կողմից դրամական միջոցները սպասարկող ՀՀ առևտրային բանկերը վստահելի են:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Հիմնադրամի գործարքներն արտահայտված են ՀՀ դրամից տարբեր արժույթով:

Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով էական ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ չունի:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Հիմնադրամի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Հիմնադրամի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:
Համաձայն Հիմնադրամի քաղաքականության՝ Հիմնադրամը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ:
Ստորև ներկայացված են Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Կրեդիտորական պարտքեր	267	-	-	-	-
	267	-	-	-	-

	Մինչև 1 ամիս հազ. դրամ	1-ից 3 ամիս հազ. դրամ	3-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
Կրեդիտորական պարտքեր	20	-	-	-	-
	20	-	-	-	-

4 Հասույթ

	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Միջոցառումների կազմակերպումից	32,039	27,756
Դասընթացների կազմակերպումից	17,062	5,505
Խորհրդատվություն, մենթորություն, մարզչական ծառայություններից մատուցումից	15,017	4,243
Տվյալագիտության ծառայության մատուցումից	6,772	-
Այլ	4,178	520
	75,068	38,024

5 Վաճառքի ինքնարժեք

	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Աշխատավարձի գծով ծախսեր	35,283	4,892
Միջոցառումների կազմակերպման ծախսեր	3,260	-
Այլ	760	6,482
	39,303	11,374

6 Շնորհից եկամուտ

	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Եկամուտներին վերաբերող շնորհներից	5,771	-
	5,771	-

7 Վարչական ծախսեր

	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Աշխատավարձի գծով ծախսեր	39,646	5,061
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,179	192
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,588	1,901
ՀՄ մաշվածության, վերանորոգման և սպասարկման ծախսեր	1,339	-
Աուդիտի և խորհրդատվական ծախսեր	600	-
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	306	183
Բանկային ծախսեր	91	49
Այլ ծախսեր	2,150	361
	47,899	**7,747**

8. Ծրագրային ծախսեր

	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Կայուն զարգացման նպատակների ֆինանսավորման հարթակի տեխնոլոգիաների ծրագիր	5,771	-
	5,771	**-**

9. Դրամական միջոցներ

	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Բանկային հաշիվներ (ՀՀ դրամ)	11,914	8,531
Բանկային հաշիվներ (ԱՄՆ դոլար)	2	2
	11,916	**8,533**

Դրամական միջոցները պահվում են ՀՀ առևտրային բանկերում:

10. Դեբիտորական պարտքեր, կանխավճարներ

	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Տրված կանխավճար	2,841	51
Առևտրային դեբիտորական պարտքեր	765	8,899
Հարկերի գծով կանխավճար	432	-
	4,038	**8,950**

11. Շահութահարկ

	2019թ. հազար դրամ	2018թ. հազար դրամ
Ընթացիկ հարկի գծով փոխահատուցում (ծախս)	1,422	(3,728)
Հետաձված հարկի գծով եկամուտ	751	-
Ընդամենը հարկի գծով եկամուտ/(ծախս)	**2,173**	**(3,728)**

ՀՀ Հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը հաշվետու տարում սահմանված է 20% (2018թ.՝ 20%), իսկ 2020թ.-ից սահմանվել է 18%:

Արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2019թ.		2018թ.	
	Հազար դրամ	%	Հազար դրամ	%
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (ՖՀՄՍ)	(12,503)		18,602	
Շահութահարկի գծով եկամուտ/(ծախս)	2,501	20.0%	(3,720)	20.0%
Շահութահարկի առումով չհարկվող եկամուտների/ (չնվազեցվող ծախսերի) ազդեցությունը, զուտ	(328)	(2.6%)	(8)	0.1%
Տարվա հարկային եկամուտը/(ծախսը) և արդյունավետ դրույքը	2,173	17.4%	(3,728)	20.1%

Հետաձգված հարկեր

31.12.2019թ.-ի դրությամբ հետաձգված հարկը հաշվարկվել է հետաձգված վնասի և ժամանակավոր տարբերությունների վրա 18% դրույքաչափով (31.12.2018թ.՝ 20%):

Հոդված	Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)		
	31.12.2018թ.	Տարվա եկամուտ/ (ծախս)	31.12.2019
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Արձակուրդային պահուստ	-	751	751
Հարկային վնաս	-	1,422	1,422
	-	2,173	2,173
Հարկային ակտիվների ապաճանաչում	-	-	-
	-	2,173	2,173

12. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2019թ. Հազար դրամ	2018թ. Հազար դրամ
Մնացորդը տարեսկզբին	-	-
Ստացված դրամաշնորհներ՝ դրամային	14,950	-
Շնորհից եկամտի ճանաչում	(5,771)	-
Մնացորդը տարեվերջին	9,179	-

13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2019թ. Հազար դրամ	2018թ. Հազար դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	267	20
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ՝ վարկերի և փոխառությունների	267	20
Չօգտագործված արձակուրդի պահուստի գծով	4,175	-
Ստացված կանխավճարներ	806	945
Հարկերի գծով	-	1,644
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	5,248	2,609

14. Կապակցված կողմերի հետ գործարքներ

14.1. Գործարքներ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամը կապակցված կողմերի հետ գործարքներ չի իրականացրել:

14.2. Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավատու են և պատասխանատվություն են կրում Հիմնադրամի գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Հիմնադրամի կառավարչական անձնակազմը կազմված է տնօրենից:

	2019թ.	2018թ.
Աշխատավարձ և այլ հատուցումներ	14,370	2,758
	14,370	2,758

15. Պայմանական պարտավորություններ

Հիմնադրամը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա:

16. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) լայն աշխարհագրական տարածման հետևանքով, ՀՀ Կառավարությունը սահմանել է արտակարգ դրություն Հայաստանի ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից մինչև հուլիսի 13-ը:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ստեղծված իրավիճակը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Հիմնադրամի վրա, մասնավորապես.

- Ծրագրերի իրականացման ժամկետների և ծավալների վրա,
- Ստացվող շնորհների վրա,
- Գրասենյակային և ծրագրային տարածքների հասանելիության վրա:

Ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Հիմնադրամը հնարավոր չի համարում գնահատել վերոնշյալ դեպքի ֆինանսական հետևանքը հաշվետվությունների վրա:

17. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Արտարժութային գործարքներ

Հիմնադրամի գործառնական արժույթից տարբեր արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից գոյացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամը իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով:
Հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով: Մաշվածության հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ ժամետները.

Հիմնական միջոցի անվանումը	Ժամկետը
Գրասենյակային գույք	8 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի

Շնորհներ

Հիմնադրամը որպես շնորհ հաշվառում է տեղական և միջազգային կազմակերպություններից ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով:

Շնորհները ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար ստացվել են այդ շնորհները:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2020 18:05